ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

373.31

ՇԱԽՄԱՏԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԻ» ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆԺԵԼԱ ՍԱՐԳՍՅԱՆ
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
«Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատող
sargsyananzhela54@aspu.am

ԱՐՄԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
«Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատող
khachatryanarmine54@aspu.am

Համառոտագիր

Հոդվածում ներկայացվում են շախմատ դասավանդելու «լավագույն փորձ» ունեցող ուսուցիչների քննադատական մտածողության և դրա բաղադրիչների առկա մակարդակը, աշխատանքային մոտիվացիայի մակարդակը: Հետազոտության հիմքում ընկած են «Քննադատական մտածողության» հարցարանը (հեղինակային մշակում) և Ֆ.Հերցբերգի «Մոտիվացիոն կառուցվածքի թեստ»-ի արդյունքների վերլուծությունը: Հետազոտական տվյալներից պարզ է դառնում, որ «Քննադատական մտածողության» հարցարանը կիրառելիս հետազոտվող 45 շախմատի ուսուցիչների 62 %-ն առավելապես դրսևորել է քննադատական մտածողություն: Ֆ. Հերցբերգի մոտիվացիոն կառուցվածքի թեստը կիրառելիս հետազոտվող 45 շախմատի ուսուցիչների 75 %-ի դեպքում աշխատանքային գործունեության ընթացքում գերիշխել են ներքին, իսկ 25 %-ի դեպքում՝ արտաքին մոտիվները:

Բանալի բառեր և բառակապակցություններ

«Շախմատ» ուսումնական առարկա, քննադատական մտածողություն, մոտիվացիա, հմտություններ:

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ «НАИЛУЧШЕГО ОПЫТА» УЧИТЕЛЕЙ ШАХМАТ

АНЖЕЛА САРГСЯН
Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна
научный сотрудник Научно-исследовательского института «Шахматы»
sargsyananzhela54@aspu.am

АРМИНЕ ХАЧАТРЯН
кандидат психологических наук, доцент
научный сотрудник Научно-исследовательского института «Шахматы»
Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна
khachatryanarmine54@aspu.am

Аннотация

В статье представлен уровень критического мышления и мотивации работы учителей шахмат с «наилучшим опытом». Во время экспериментальных психологических

исследований были использованы анкета для критического мышления (авторская разработка) и «Тест мотивационной структуры» Герцберга. Опрос показал, что у 62% из 45 опрошенных учителей шахмат доминирует критическое мышление. В результате применения теста мотивационной структуры Герцберга 75% из 45 опрошенных учителей шахмат доминировали внутренние мотивы во время трудовой деятельности, а 25% - внешние.

Таким образом, наличие вышеупомянутых профессиональных компетенций учителей с «наилучшим опытом» в преподавании шахмат способствует эффективности образовательного процесса.

Ключевые слова и фразы

Учебный предмет «Шахматы» критическое мышление, мотивация, компетентность.

PSYCHOLOGICAL STUDIES OF THE "BEST PRACTICE" OF CHESS TEACHERS

ANZHELA SARGSYAN

Armenian State Pedagogical University after Kh.Abovyan
"Chess" Scientific Research Institute, Researcher
sargsyananzhela54@aspu.am

ARMINE KHACHATRYAN

PhD in Psychology, Associate Professor
"Chess" Scientific Research Institute, Researcher
Armenian State Pedagogical University after Kh. Abovyan,
khachatryanarmine54@aspu.am

Abstract

The article presents the level of critical thinking and work motivation of chess teachers with "best experience". During experimental psychological research, a critical thinking questionnaire (authoring) and Herzberg's Motivational Structure Test were used. The survey showed that 62% out of the 45 surveyed chess teachers had critical thinking. As a result of applying the Herzberg motivational structure test, 75% of the surveyed 45 chess teachers interviewed dominated the internal motives during their working life, while 25 per cent dominated the external ones.

Thus, the presence of the aforementioned professional competencies of teachers with the "best experience" in chess teaching contributes to the effectiveness of the educational process.

Keywords and phrases

Subject "Chess", critical thinking, motivation, competence.

2016 թվականի Դավոսի Համաշխարհային տնտեսական ֆորումը նշանավորվեց կրթության զարգացման հիմնահարցերի առաջադրմամբ: Քննարկելով կրթության ոլորտի մասնագետների կարողություններն ու հմտությունները՝ 2020 թվականի համար առանձնացվեցին առավել արդիական հետևյալ հմտությունները՝ գտնել առաջադրված խնդիրների համալիր լուծումներ, ընդունել դատողություններին համապատասխան որոշումներ, իրականացնել համատեղ գործունեություն, բանակցություններ վարել, ցուցաբերել քննադատական մտածողություն, ստեղծագործականություն, մարդկային ռեսուրսների կառավարում, հուզական կայունություն, իմացական ճկունություն (Davos, 2016): Ապագայի մասնագետների համար մասնավորապես կարևորվում են քննադատական մտածողության և հուզական ինտելեկտի առկայությունը:

Հայ գիտնականներն իրենց տեսական ենթադրությունների ու էմպիրիկ հետազոտությունների համապատասխան՝ առանձնացնում են շախմատի ուսուցիչների հետևյալ հմտությունները՝ առարկայի իմացություն, շփում և հաղորդակցում, ուսուցման ռազմավարության և մեթոդների ընտրություն, մտածական կարողություններ, նպատակների պլանավորում և առաջադրում, ուսուցման հմտություններ՝ սովորողների պահանջմունքների գիտակցում, դասարանի կառավարում և մոտիվացում, գնահատում (Սարգսյան, Խաչատրյան, 2019, էջ 12)։ Վ. Սարգսյանը և Հ. Խաչատրյանը մասնավորապես ընդգծում են շախմատի ուսուցչի՝ «քննադատաբար մտածելու» կարողության անհրաժեշտությունը։ Ըստ հեղինակների՝ «քննադատաբար մտածել» նշանակում է տեղեկատվությունը, գիտելիքը քննարկել բազմակողմանիորեն, վերլուծել, համեմատել, ձևափոխել, որպես արդյունք՝ հանգել որոշակի դիրքորոշման, այն ընդունել կամ ժխտել։ Ընդ որում, նման ուսուցիչը ոչ միայն ինքն է դրսևորում այդ որակները, այլև զարգացնում է դրանք իր սաների մեջ» (Սարգսյան, Խաչատրյան, 2019, էջ 15)։

Ս. Խաչատրյանը դիտարկում է «Շախմատ» առարկայի այն առանձնահատկությունները, որոնցում դրսևորվում է դրա հանրակրթական արժեքը։ Մասնավորապես, հեղինակի կարծիքով, շախմատը նպաստում է սովորողների ուշադրության կենտրոնացմանը, կազմակերպական որակների ձևավորմանը, դիմացինի քայլերը հաշվի առնելու կարողության և քննադատական մտածողության զարգացմանը։ Ըստ Ս. Խաչատրյանի՝ շախմատի ուսուցիչը պետք է քննադատական մտածողությունը դիտարկի որպես վերջնանպատակ (Խաչատրյան, 2019, էջ 12)։

Քննադատական մտածողության վերջնանպատակն է իրադրությունը վերլուծելու, որոշումներ կայացնելու և խնդիրներ լուծելու հմտությունների ձևավորումը։ Քննադատաբար մտածող անձինք իրենց եզրակացությունները կառուցում են ավելի շատ փաստերի, քան զգացմունքների վրա։ Նրանք կարողանում են վերլուծել սեփական դատողությունները, հայտնաբերել բացթողումներն ու կանխատեսել հետևանքները՝ ընդհանուր առմամբ կատարելագործելով իրենց գաղափարները (Murawski, 2014, Lundquist, 1999)։

21-րդ դարում մրցակցային աշխատաշուկան իրապես կարևորում է քննադական մտածողությամբ օժտված ուսուցիչների դերը սերնդի կրթության և դաստիարակության գործում։ Սակայն կրթական համակարգում քննորեն մտածող ուսուցիչներին «պահելու» և մոտիվացնելու պահանջը մեծացել է, և գործատուները գիտակցում են նաև դրա կարևորությունը։

Վերջին տասնամյակում մշակվել են աշխատանքային մոտիվացիայի բնութագրման բազմաթիվ տեսություններ, որոնք մեծամասամբ ուսումնասիրում են անձի պահանջմունքները, դրանց ազդեցությունը և դերը աշխատանքային գործունեության մոտիվացիոն ոլորտի վրա։

Նպատակ ունենալով արձանագրել և բացահայտել դպրոցում դասավանդման «լավագույն փորձ» ունեցող շախմատի ուսուցիչների քննադատական մտածողության և դրա բաղադրիչների, ինչպես նաև աշխատանքային մոտիվացիայի մակարդակը՝ 2019 թվականին «Շախմատ» գիտահետազոտական

ինստիտուտի հոգեբանների թիմն իրականացրել է ***փորձարարական հետազոտություն***:

Փորձարարական հետազոտությունն իրականացվել է հետևյալ ***հաջորդական փուլերով.***

1. Հետազոտության տեսամեթոդաբանական հիմքերի մշակում
2. Հետազոտության մեթոդների ընտրություն, փորձնական կիրառում, հարմարում
3. Գիտահետազոտական աշխատանքի իրականացում
4. Ստացված տվյալների վերլուծություն, եզրակացությունների և գործնական առաջարկությունների ձևակերպում

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմքերն են.

1. Լ. Մուրաուսկու և Ռ. Լանդքուիսթի քննադատական մտածողության մասին տեսական դրույթները (Murawski,2014, Lundquist, 1999)
2. Ֆ. Հերցբերգի աշխատանքային մոտիվացիայի տեսությունը (Herzberg, 2010)

Հետազոտության ընտրակազմը

Փորձարարական հետազոտությունն անցկացվել է Կոտայքի մարզում՝ ընդհանուր թվով շախմատի 45 ուսուցչի շրջանում: Կոտայքի մարզի տարբեր դպրոցներից փորձարկվողներն ընտրվել են ըստ հետևյալ չափանիշների՝

1. փորձագիտական գնահատական
2. հավատարմագրման արդյունքներ

Փորձարարական հետազոտության մեթոդներն են.

1. «Քննադատական մտածողության» հարցարան (հեղինակային մշակում) Քննադատական մտածողության հեղինակային հարցարանը կազմելիս հիմնվել ենք Լ. Մուրաուսկու և Ռ. Լանդքուիսթի քննադատական մտածողության մասին տեսական դրույթների վրա (Murawski, 2014, Lundquist, 1999):

2. Ֆ. Հերցբերգի «Մոտիվացիոն կառուցվածքի թեստ» (Herzberg, 2010):

Հեռք բերված գիտական արդյունքները

Ստորև ներկայացնենք մասնագիտական գործունեության ընթացքում շախմատի ուսուցիչների քննադատական մտածողության բաղադրիչներից յուրաքանչյուրի դրսևորման առկա մակարդակը՝ ըստ միջինացված տվյալների.

1. անձնային սահմանափակումների ընդունում՝ 60 %,
2. խնդիրներին՝ որպես մարտահրավերի դիտում՝ 40 %,
3. նպատակի կարևորության գիտակցում՝ 55 %,
4. վճիռը կայացնելու համար ապացույցների կիրառում՝ 45 %,
5. մյուսների մտքերով հետաքրքրվածություն՝ 55 %,
6. փոփոխությունների ընդունում՝ 30 %,
7. կարծրատիպերի մերժում՝ 40 %,
8. հուզականությունից խուսափում՝ 30 %,
9. նոր մտքերի ընդունում՝ 35 %,
10. ակտիվ լսելու ընդունակություն՝ 45 %:

Քննադատական մտածողության բաղադրիչների ցուցանիշներն ավելի տեսանելի դարձնելու նպատակով՝ ներկայացնենք դրանք գծապատկերով (Տե՛ս Գծապատկեր 1)։



Գծապատկեր 1. Շախմատի ուսուցիչների քննադատական մտածողության բաղադրիչների առկա մակարդակ

Հետազոտական տվյալներից պարզ է դառնում, որ «Քննադատական մտածողության» հարցարանի կիրառման արդյունքում հետազոտվող շախմատի 45 ուսուցիչներից 62 %-ն առավելապես դրսևորում է քննադատական մտածողություն (Տե՛ս Գծապատկեր 2.)։

Գծապատկեր 2. «Քննադատական մտածողության» հարցարանի կիրառման արդյունքների վերլուծություն

Հետազոտական աշխատանքը պլանավորելուց և իրականացնելուց առաջ մեր հետազոտական թիմի համար կարևոր էր նաև հետևյալ հարցադրումը՝ որքանո՞վ են դասավանդման լավագույն փորձ ունեցող շախմատի ուսուցիչները մոտիվացված, և աշխատանքային գործունեության ընթացքում հատկապես ո՞ր մոտիվներն են գերիշխում: **Նպատակ ունենալով** բացահայտել դպրոցում դասավանդման «լավագույն փորձ» ունեցող շախմատի ուսուցիչների աշխատանքային մոտիվացիայի մակարդակը՝ կիրառել ենք Ֆ. Հերցբերգի «Մոտիվացիոն կառուցվածքի թեստ»-ը, որն ուղղված է բացահայտելու աշխատանքային մոտիվացիայի կառուցվածքում գերիշխող մոտիվների համախումբը (Herzberg, 2010):

Ֆ. Հերցբերգի երկգործոնային տեսության հիմքում ընկած է պահանջմունքների երկու մեծ խումբ. արտաքին և ներքին: Արտաքին գործոնները կապված են շրջապատող այն միջավայրի հետ, որտեղ իրականացվում է աշխատանքային գործունեությունը, իսկ ներքին գործոնները պայմանավորված են աշխատանքի բնույթի հետ:

Ֆ. Հերցբերգը պահանջմունքների առաջին խումբն անվանել է հիգիենիկ՝ օգտագործելով «հիգիենա» (նախազգուշացում) բառի բժշկական իմաստը: Նրա կարծիքով՝ այս գործոնները բնորոշում են աշխատանքային միջավայրը և կարող են աշխատանքից բավարարված չլինելու առաջնային գործառույթ ունենալ: Պահանջմունքների երկրորդ խումբը Հերցբերգն անվանել է մոտիվացնող կամ նպաստող, որոնք դրդում են աշխատանքային գործունեության լավագույն կատարմանը: Նշենք, որ Հերցբերգն իր ուսումնասիրությունների արդյունքում եզրակացրել է, որ աշխատավարձը աշխատանքային գործունեության մոտիվացնող գործոն չէ և գտնվում է առաջին խմբում (Herzberg, 2010):

Աղյուսակ 1. Աշխատանքային մոտիվացիայի Կառուցվածքն՝ ըստ *Ֆ. Հերցբերգի*

Արտաքին մոտիվներ	**Ներքին դրդող մոտիվներ**
Ղեկավարության քաղաքականություն	Հաջողություն
Աշխատանքային պայմաններ	Կարիերայում առաջընթաց
Աշխատավարձի չափ և սոցիալական ստատուս	Աշխատանքի արդյունքների ընդունում և խրախուսանք
Ղեկավարության հետ միջանձնային հարաբերություններ	Պատասխանատվություն
Թիմային համագործակցություն	Ստեղծագործական և մասնագիտական աճի հնարավորություն

Հետազոտական արդյունքների վերլուծությունից պարզվում է, որ շախմատի ուսուցիչների աշխատանքային մոտիվացիայում ներքին, դրդող մոտիվները գերիշխում են արտաքինին: Հետաքրքրական է, որ արտաքին մոտիվները՝ ղեկավարության քաղաքականությունը, աշխատանքի պայմանները, ղեկավարության հետ միջանձնային հարաբերությունները, աշխատավարձի չափը և սոցիալական ստատուսը քիչ տոկոս են կազմում՝ 25 %:

Արդյունքներն ավելի տեսանելի դարձնելու նպատակով՝ դրանք ներկայացնենք աղյուսակի տեսքով (Տե՛ս Աղյուսակ 2.):

Աղյուսակ 2. Ֆ. Հերցբերգի մոտիվացիոն կառուցվածքի թեստի բաղադրիչների առկա մակարդակ

Ներքին մոտիվներ		**Արտաքին մոտիվներ**	
Գործոններ	***Միջինացված միավորներ***	***Գործոններ***	***Միջինացված միավորներ***
Աշխատանքի բովանդակություն	19,8	Թիմային համագործակցություն	16,2667
Անձնային ձեռքբերումներ	18,93333	Ղեկավարության հետ հարաբերություն-ներ	11,7333
Կարիերա, առաջընթաց աշխատանքում	18	Հասարակական ճանաչում	17,3333
Աշխատանքի պատասխանատվություն	17,46667	Ֆինանսական մոտիվներ	15,4667

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Ֆ. Հերցբերգի մոտիվացիոն կառուցվածքի թեստի կիրառման արդյունքում ընդհանուր թվով հետազոտվող շախմատի 45 ուսուցիչներից 75 %-ի մոտ աշխատանքային գործունեության ընթացքում գերիշխում են ներքին, իսկ 25 %-ի մոտ՝ արտաքին մոտիվները (Տե՛ս Գծապատկեր 2.):

Գծապատկեր 3. Շախմատի ուսուցիչների աշխատանքային մոտիվացիայի կառուցվածքն՝ ըստ *Ֆ. Հերցբերգի:* «Մոտիվացիոն կառուցվածքի թեստի կիրառման արդյունքների վերլուծություն



Հաշվի առնելով փորձարարական հետազոտության արդյունքները՝ եզրակացնում ենք, որ շախմատի դասավանդման լավագույն փորձ ունեցող ուսուցիչները մասնագիտական գործունեության ընթացքում ընդունում են իրենց անձնային սահմանափակումները, գիտակցում նպատակի կարևորությունը, հետաքրքրված են մյուսների մտքերով և ցուցաբերում են ակտիվ լսելու ընդունակություն: Սա վկայում է նրանց քննորեն մտածելու կարողության մասին. միևնույն ժամանակ բացահայտվեց նաև, որ շախմատի դասավանդման լավագույն փորձ ունեցող ուսուցիչները մասնագիտական գործունեության ընթացքում հատկապես կարևորում են առաջընթացը կարիերայում, հաջողությունը, աշխատանքի արդյունքների ընդունումն ու խրախուսանքը, պատասխանատվությունը, ստեղծագործական և մասնագիտական աճի հնարավորությունը: Սա վկայում է այն մասին, որ անկախ աշխատավարձի չափից և սոցիալական ստատուսից, ուսուցիչները հատկապես առաջնորդվում են ներքին մոտիվներով:

Մեր խորին համոզմամբ՝ շախմատի դասավանդման «լավագույն փորձով» ուսուցիչների մասնագիտական վերոնշյալ հմտությունների առկայությունն էլ նպաստում է ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետությանը:

Ուստի, կարևորելով շախմատի դասավանդման «լավագույն փորձ»-ի տարածումը՝ ներկայումս մեր հետազոտական խմբի կողմից մշակվում է «Շախմատ»-ի ուսուցիչների դասավանդման «Լավագույն փորձի» մոդել՝ ուղղված 21-րդ դարի ուսուցչի հիմնարար հմտությունների ձևավորմանն ու բաղադրիչների զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Խաչատրյան Ս.** (2019) Շախմատը զարգացնում է հիմնային որակներ, Շախմատային կրթության արդի վիճակը և զարգացման միտումները: Միջազգային գիտաժողով: Ծաղկաձոր 2019. -Եր: Քոփի Փրինթ, 2019. -144 էջ, էջ 11-13
2. **Սարգսյան Վ. , Խաչատրյան Հ.** , (2019) Շախմատի ուսուցչի մասնագիտական կարողությունները, ՇԱԽՄԱՏ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, գիտամեթոդական ամսագիր (N 2019). - 64 էջ, էջ 11-18
3. **Herzberg F., Mausner B., Snyderman B.B.** (2010) The Motivation To Work
4. **Linda M**. EdD (2014), Critical Thinking in the Classroom…and Beyond. *Journal of Learning in Higher Education, Spring 2014 (Volume 10 Issue 1), 25-30*
5. **Lundquist, R**. (1999). Critical thinking and the art of making good mistakes. Teaching in Higher Education, 4(4), 523–530.
6. The 10 skills you need to thrive in the Fourth Industrial Revolution. Retrieved May 10, 2020 from: https://www.weforum.org/agenda/2016/01/the-10-skills-you-need-to-thrive-in-the-fourth-industrial-revolution/

Հոդվածը ներկայացվել է տպագրության 13.03.2020 թ.,
ուղարկվել է գրախոսության 17.04.2020 թ., ընդունվել է տպագրության 09.09.2020 թ.: